

Цепочка ценностей одежды - это набор элементов создания добавочной стоимости, которая управляется ведущими компаниями цепи, крупными покупателями и розничными посредниками. Последние выполняют функции с высокой добавочной стоимостью, организуя производство посредством аутсорсинга. Начатая в 2005 году либерализация рынка привела к новым стратегиям аутсорсинга: прямому аутсорсингу посредством создания аутсорсинговых офисов, а также аутсорсингу в уже существующих производственных сетях. Достижение необходимых критерий для интеграции в цепочку, то есть модернизация цепочки осуществляется с помощью операционных и производственных методов.

DAVID PETROSYAN
ARSEN YRKOYAN

THE APPAREL GLOBAL VALUE CHAIN DESCRIPTION

Key words: value chain, added value, globalization, outsourcing, brand, operational efficiency, strategic coordination, integration.

The apparel value chain is a set of value-added links, which are governed by the leading companies, major buyers, and retailers of the chain. They carry out high value-added functions by performing production through outsourcing. Starting from 2005, market liberalization has resulted new outsourcing strategies: direct outsourcing by creating local outsourcing offices, or outsourcing among existing production networks. Obtaining the capabilities, necessary for chain integration, especially upgrading of the chain is being achieved by operational and production methods.

ՀԱՅԿ ՊՈՂՈՍՅԱՆ

Ապահովագրական գործ,
բակալավորիալ, 3-րդ կուրս

ՀՀ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՇՈՒԿԱՆ ԵՎ ՆՈՐ ՊՐՈԴՈՒԿՏՆԵՐԸ
(ԱՊՐԱՆՔՆԵՐ)

Հիմնաբառեր. ապահովագրական շուկա, նոր պրոդուկտներ (ապրանքներ), ապահովագրական պոլիս, ապահովագրական խոշոր ընկերություններ, Մինիմեր, Կասկո պլյուս

Հոդվածում անդրադարձ է կատարվում Հայաստանի ապահովագրության զարգացման փուլերին, նշվում են շուկայի խոշոր ապահովագրական ընկերությունները, նրանց դերը և մշակված նոր ապահովագրական ծածկույթների ընդհանուր բնութագրերը, շուկայի առաջատար ընկերությունների՝ արտաքին շուկաներ մուտքի հնարավոր ուղիները: Հոդվածի շրջանակում առաջարկվում է կրիպտոարժույթների մայնինգ ֆերմաների ապահովագրական ծածկույթի ներդրումը՝ որպես նոր պրոդուկտ:

ՀՀ ապահովագրական շուկան սկսել է զարգանալ ԽՍՀՄ փլուզումից հետո՝ նախնական շրջանում ութ տասնյակից ավելի ընկերություններով, որոնց գործունեության կարգավորման համար համապատասխան և ամբողջական առանձին օրենսդրություն չի եղել: Ապահովագրական շուկան հան-

րապետությունում զարգացել է փուլերով՝ պայմանավորված ոլորտի կարգավորման համար անհրաժեշտ օրենսդրական փաթեթների ընդունմամբ: Առաջին փուլը կարելի է համարել 1996 թ. նոյեմբերի 19-ը, երբ ընդունվեց անկախության պատմության մեջ ապահովագրական դաշտը կարգավորող առաջին օրենքը՝ ՀՀ օրենքը «Ապահովագրության մասին», և աստիճանաբար կրճատվեց ապահովագրական ընկերությունների քանակը և կարգավորվեց նրանց գործունեության վերահսկման և համակարգման ոլորտը: Արդեն 1998-ին հաշվվում էր 20 ընկերություն, որոնցից միայն 11-ն էր գործունեություն ծավալում: Երկրորդ փուլը 2004 թ. հունիսի 11-ին ընդունված օրենքով է սկսվում, որը նոր հարթություն փոխադրեց ոլորտի կարգավորումը և վերահսկողությունը:

Արդեն 2006 թ. հանրապետությունում ֆինանսական համակարգի միասնական կարգավորման շրջանակում ոլորտի վերահսկողությունը ՀՀ էկոնոմիկայի նախարարությունից անցավ Կենտրոնական բանկին: Վերջինիս նախաձեռնությամբ 2007 թ. ընդունվեց «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքը և սահմանվեցին ընկերությունների արտոնագրման ավելի խիստ պայմաններ, որի արդյունքում ընկերությունների թիվը կրճատվեց՝ դրանց միավորման, պորտֆելների փոխանցման եղանակներով:

Ներկայումս, ՀՀ տարածքում ապահովագրական գործունեության արտոնագիր ունեն 8 ապահովագրական ընկերություններ, որոնցից գործունեություն ծավալում է 7-ը: Այդ ընկերություններն են. «Այ Էս Զի» ԱՍՊԸ¹, «Ինգո Արմենիա» ԱՓԲԸ, «Հայաստանի արտահանման ապահովագրական գործակալություն» ԱՓԲԸ, «Նաիրի ինշուրանս» ԱՍՊԸ, «Ռեսո» ԱՓԲԸ, «Ռուսգոսստրախ Արմենիա» ԱՓԲԸ, «Արմենիա ինշուրանս» ԱՍՊԸ, «Սիլ ինշուրանս» ԱՓԲԸ²:

Սրանցից 3-ը սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություններ են, 5-ը՝ փակ բաժնետիրական, 4-ը ազգային կապիտալով են, ընդ որում՝ 3-ը՝ մասնավոր, 1-ը՝ պետական, 3-ը՝ օտարերկրյա բաժնեմասով:

Ապահովագրական շուկայում բրոքերային գործունեություն ծավալելու արտոնագիր ունեն 3 բրոքերային կազմակերպություններ³. «Ռեզոլյուշն» ապահովագրական բրոքեր ՍՊԸ, «Փրայմ ինշուրանս» բրոքերային ՍՊԸ, «Քրեսթն Գլոբալ Եվրասիա ապահովագրական և վերաապահովագրական բրոքեր» ՓԲԸ:

ՀՀ կենտրոնական բանկի կողմից գործակալական գործունեության իրականացման արտոնագիր ունի 3000 գործակալ⁴:

Ապահովագրական շուկայում նշանակալից աշխուժացում տեղի ունեցավ 2010 թ.՝ «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքի ընդունմամբ և 2011 թ. հունվարի 1-ին ուժի մեջ մտնելով:

Ներկայումս շուկայում գործող բոլոր ապահովագրական ընկերություններն արտոնագիր ունեն միայն **ոչ կյանքի** ապահովագրության դասերով

¹ «Այ Էս Զի» ԱՍՊԸ ընկերությունը գործունեություն չի ծավալում:

² www.cba.am/am/SitePages/fscfoinsuranceorganization.aspx

³ www.cba.am/am/SitePages/fscfoinsurancebrokers.aspx

⁴ https://abcfinance.am/financial_system/banks.html

ապահովագրական գործունեություն իրականացնելու համար, իսկ *կյանքի* ապահովագրության դասերով պայմանագրեր չեն կնքվում:

Ապահովագրական ընկերությունների հավաքագրած ապահովագրավճարների կառուցվածքում 2017 թ. ընթացքում ամենամեծ տեսակարար կշիռն ունեն ցամաքային տրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրությունը (շուրջ 54%), առողջության ապահովագրությունը (շուրջ 23%), գույքին հասցված այլ վնասներից ապահովագրությունը (շուրջ 10%): Համապատասխանաբար ապահովագրական ընկերությունների կողմից վճարված ապահովագրական հատուցումների կառուցվածքում մեծ տեսակարար կշիռն ունեն ցամաքային տրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրությունը, առողջության ապահովագրությունը, գույքին հասցված այլ վնասներից ապահովագրությունը:

Ապահովագրական ընկերությունները, հատկապես՝ խոշոր և առաջատար «Ռոսգոսստրախ Արմենիա» ԱՓԲԸ-ն և «Ինգո Արմենիա» ԱՓԲԸ-ն, մշտապես կատարելագործում են առկա պրոդուկտները և մշակում, առաջարկում նորերը՝ դրանք առավել մատչելի դարձնելով գնային քաղաքականության և հասանելիության առումով, օգտագործելով նաև էլեկտրոնային աշխարհի նորարար հնարավորություններ՝ էլեկտրոնային մարքեթինգ և առևտուր:

2017 թ. դեկտեմբերից ապահովագրական ընկերությունները սկսեցին առաջարկել էլեկտրոնային եղանակով «ԱՊՊԱ» պայմանագրերի կնքում, որը հասանելի է ընկերությունների պաշտոնական կայքէջերում՝ շաբաթվա ցանկացած օր և ցանկացած ժամի: Առաջինն այս ծառայությունը սկսեցին առաջարկել «Ռոսգոսստրախ Արմենիան» և «Ինգո Արմենիան» սկզբնական շրջանում որպես փորձնական տարբերակ, այնուհետև փորձարկելուց հետո ապահովվեց մշտական հասանելիություն: Ապահովադիրների համար այս եղանակի առավելությունը 5% իջեցված ապահովագրավճարն է, իսկ ընկերությունները տնտեսում են գործավարման ծախսերում՝ ազատվելով գործակալական միջնորդավճարից:

Այս եղանակով ապահովագրական պայմանագրերի գովազդը շատ ավելի շահեկան է ինչպես ապահովագրական ընկերությունների, այնպես էլ ապահովադիրների համար, քանի որ պրոդուկտների մասին կարելի է գտնել անհրաժեշտ և ամփոփ տեղեկատվություն և պայմանագիր կնքել՝ հետագայում պայմանագրի գրավոր ձևը ստանալով կարճ ժամկետներում՝ ժամանակի և մարդկային ռեսուրսների նվազագույն ծախսերով:

Նոր պրոդուկտների մշակման հաջողված փորձ ունի շուկայի առաջատար «Ռոսգոսստրախ Արմենիան»¹, որը 2018 թ. հունվարի 22-ին ներկայացրեց Հայաստանի զբոսաշրջության պետական կոմիտեի և Հայաստանի արկածային տուրիզմի ասոցիացիայի հետ համատեղ մշակված ապահովագրական նոր պրոդուկտ՝ արկածային տուրիզմի ապահովագրություն²: Այն նախատեսված է ինչպես երկիր ժամանող զբոսաշրջիկների, այնպես էլ ՀՀ քաղաքացիների համար, գործում է ՀՀ և Արցախի Հանրապետության տարած-

¹ <http://www.rgs.am/arm/4/page.html>

² <http://www.rgs.am/arm/58/news.more.html>

քում, դժբախտ պատահարներից ապահովագրական ծածկույթ է ապահովում 5 միլիոն դրամի սահմաններում: Զարգացող զբոսաշրջության և դրա գրավչության տեսանկյունից այս պրոդուկտի ներդրումը շատ նպատակային է և կատարված է ճիշտ ժամանակին: Մեր կարծիքով համագործակցությունը մասնավոր և պետական հատվածների միջև լավագույն ուղիներից է ապահովագրական նոր պրոդուկտների մշակման և տեղական ապահովագրական շուկայի աշխուժացման համար:

Ընկերությունը մշակել և ներկայացրել է առողջության ապահովագրության երկու պրոդուկտը Մինիմեդ և Մինիմեդ+, որոնք երաշխավորում են համապատասխանաբար 200,000 դրամ և 400,000 դրամ ծածկույթ: Մինիմեդ ծրագրով, պայմանագիրն առաջին անգամ կնքելու դեպքում, կարող է ապահովագրվել մինչև 65 տարեկան ցանկացած անձ: Պայմանագրի վերակնքումը հնարավոր է մինչև 70 տարեկան: Սա շատ շահեկան և բավականին հասանելի պրոդուկտ է հասարակության լայն շերտերի համար, հատկապես՝ առաջիկայում նախանշվող բժշկական ապահովագրության պարտադիրության համատեքստում:

Ապահովագրական ծածկույթի նոր տարատեսակ՝ Կասկո կանանց համար պրոդուկտն առաջարկում է «Ինգո Արմենիան»¹, որը նախատեսված է կին վարորդների համար և ծածկույթ է ապահովում առավելագույնը 3 վարորդի համար, կիրառում է ոչ պայմանական չհատուցվող գումար 50.000 դրամի չափով, և ապահովագրական ծածկույթի առավելագույն չափը 1.500.000 դրամ է: Ընկերությունը նաև հավելում է, որ պարտադիր պայման չէ վարորդի 23 տարին լրացած լինելը, 3 տարուց ավելի վարորդական փորձի առկայությունը և չի ավելացնում չհատուցվող գումարի չափը: Պայմանագրի պարտադիր պայմաններն են. մեքենաները պետք է լինեն մարդատար, շահագործվեն անձնական օգտագործման նպատակով, արտադրված լինեն 2004 թվականից հետո և լինեն մասսայական արտադրության, չպետք է լինեն գրավադրված, պետք է պատկանեն ֆիզիկական անձանց²: Հաշվի առնելով առաջատար երկրների փորձը (մասնավորապես՝ Ֆրանսիայի, որտեղ կին վարորդները համարվում են պակաս ռիսկային, նրանց ապահովագրական ծածկույթ են տրամադրում՝ կիրառելով գեղչեր, ցածր սակագին)՝ սա առաջին քայլն է տեղական շուկայում տարբերակված պրոդուկտ առաջարկելու:

Հաջորդը Կասկո պլյուս ապահովագրական պրոդուկտն է, որը կասկո պայմանագիր է առաջարկում այն տրանսպորտային միջոցների համար, որոնք մարդատար են, պատկանում են ֆիզիկական անձանց, 1998–2010 թթ. արտադրության են, շահագործվում են անձնական օգտագործման նպատակով, գրավադրված չեն, մասսայական արտադրության են և ընդգրկված չեն կասկո ապահովագրության հաշվիչով արգելվող կամ հաշվիչում չներառված մեքենաների ցանկում: Կասկո պլյուս փաթեթը կարող է ներառել նաև ավտոքաղաքացիական պատասխանատվության կամավոր ապահովագրություն (ԱՊԿԱ), ինչպես նաև վարորդի և ուղևորների՝ դժբախտ պատահարներից ապահովագրական ծածկույթ: Պրոդուկտը ապահովագրական ծածկույթ ապահովում է 1,5 միլիոն դրամի շրջանակում, որը գործում է ՀՀ և Արցախի

¹ <http://www.ingoarmenia.am/uploads/files/Insurance%20License%2017.08.10.jpg>

² <http://www.ingoarmenia.am/index/view/id/490/lang/am>

Հանրապետության տարածքում, կարող է 30 օր ներառել նաև Իրան և ԱՊՀ երկրների տարածքը: Ծածկույթի այս ընդլայնումը հնարավոր է ընտրել ապահովագրության պայմանագրի կնքման պահին¹: Այս պրոդուկտը գոյություն ունեցող կասկո պրոդուկտի լրամշակված և թարմացված ձևն է, որն ապահովադիրների համար առաջարկում է ավելի մեծ և շահեկան ծածկույթ:

Ուսումնասիրելով և վերլուծելով Հայաստանի ապահովագրական շուկան և առաջարկվող նոր պրոդուկտների ընդհանուր բնութագրերը՝ եզրակացնում ենք, որ շուկայի խոշոր ապահովագրական ընկերություններից երկուսը՝ «Ռոսգոսստրախ Արմենիան» և «Ինգո Արմենիան» համեմատաբար վերջերս մշակել և առաջարկում են ապահովագրական պրոդուկտներ, որոնք շուկայում ամենահաջողվածն ու լավագույնս ներկայացվածներն են: Շուկայի փոքրածավալ և ապահովագրական ընկերությունների սակավաթիվ լինելու պատճառով մյուս ընկերությունները փորձում են հետևել առաջատարներին՝ առաջարկելով նմանատիպ պոլիսների ձևափոխված տարբերակներ: ՀՀ ապահովագրական շուկայում նոր պրոդուկտներ ի հայտ կգան առողջության և բժշկական ապահովագրության պարտադիր համակարգի ամբողջական ներդրումից և գյուղատնտեսական ռիսկերից ապահովագրության հնարավորությունների գնահատման և վերջնական որոշման ընդունումից հետո: Սակայն, եթե առողջության ապահովագրության համակարգը մասնակիորեն ներդրվել է և առաջիկայում հավանաբար ամբողջությամբ կդառնա պարտադիր (ՀՀ առողջապահության նախարարությունը նախատեսում է 2019 թ.), ապա գյուղատնտեսության ապահովագրության ոլորտում դեռևս չեն ամփոփվել պիլոտային ծրագրերը, թեև Կառավարության ծրագրում ներառված է գյուղատնտեսական ռիսկերից պարտադիր ապահովագրության անցման դրույթը: Դեռևս հստակ չէ նաև, թե գյուղատնտեսական առավել ռիսկային որ ուղղությունը պարտադիր կապահովագրվի՝ բազմամյա տնկարկների², թե՛ մեկանգամյա մշակաբույսերի, հացահատիկային կուլտուրաների մշակույթում: Ապահովագրական ընկերությունների կողմից առաջարկվող նոր պրոդուկտների ցանկը հնարավոր է ընդլայնել՝ հետևելով տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման, դրանց տարածման տեմպերին և շարժընթացին, լայնորեն տարածում ստացող կրիպտոարժույթներին և դրանց արդյունահանման համար նախատեսված սարքավորումների՝ մայնինգ ֆերմաների տարածման տեմպին: Ժամանակն է նոր և արդիական տեխնոլոգիաների ապահովագրության, և նոր պրոդուկտ կարող է լինել կրիպտոարժույթների մայնինգ ֆերմաների ապահովագրական պոլիսը, որով կնախատեսվի ապահովագրական ծածկույթ և հատուցում այնպիսի ռիսկերից, ինչպիսիք են հրդեհը, կայծակի հարվածը, երրորդ անձանց հակաօրինական գործողությունները, երրորդ անձանց նկատմամբ քաղաքացիական պատասխանատվությունը, ցանցահենների (հաքերային) հարձակումները, որից կտուժեն մայնինգ համակարգերը, աշխատանքի խափանումները, հոսանքի տատանումների պատճառած վնասները, մեխանիկական ներգործությունը, ջրալցվելը, ջրածածկվելը, դետալների ժամկետից շուտ շարքից դուրս գալը:

¹ <http://www.ingoarmenia.am/index/view/id/519/lang/am>

Հայաստանյան ապահովագրական ընկերությունները կարող են բժշկական ծառայությունների և առողջության ապահովագրության պրոդուկտներ առաջարկել ներգնա զբոսաշրջիկներին՝ խթանելով առողջապահական զբոսաշրջությունը:

Ապահովագրական շուկային աշխուժացում կհաղորդի նաև Եվրասիական տնտեսական միության տարածքում միասնական ապահովագրական համակարգի ստեղծումը և անդամ երկրների միջև առևտրաշրջանառության, զբոսաշրջության, առողջապահության ոլորտներում կնքված պայմանագրերի գործողությունը, տարանցիկ բեռնափոխադրման պայմանագրերի փոխադարձ ճանաչումը, տեղական, հայաստանյան ապահովագրական ընկերությունների գործունեության թույլտվությունը միության տարածքում:

Հայաստանում դեռևս բացակայում են կյանքի ապահովագրության դասերով ապահովագրական արտոնագիր ստացած ընկերությունները, չկան կնքված պայմանագրեր, սակայն հնարավոր է ապահովագրական պետական ընկերություն ստեղծել «Ձինձառայողների ապահովագրության հիմնադրամ»-ի հենքի վրա, քանի որ հիմնադրամի գործունեությունը կապված է զինձառայողների կյանքի և առողջության ապահովագրության հետ և ներառում է կյանքի ապահովագրության տարրեր: Ընկերությունը զինձառայողների կյանքի ապահովագրությանը զուգահեռ կկնքի կյանքի և լրակեցության ապահովագրության պայմանագրեր, որոնք կապասարկեն այն ապահովադիրներին, որոնք, հանդիսանալով պարտադիր կուտակային կենսաթոշակային ապահովագրության համակարգի շահառուներ, կկնքեն կուտակային ապահովագրության պայմանագրեր, օրենսդրությամբ սահմանված տարիքից հետո պետական հիմնական կենսաթոշակի հետ կստանան կուտակած միջոցները և ապահովագրական լրավճարները:

ГАЙК ПОГОСЯН

СТРАХОВОЙ РЫНОК РА И НОВЫЕ ПРОДУКТЫ

Ключевые слова: страховой рынок, новые продукты, страховые полисы, крупные страховые компании, Минимед, Каско плюс.

В статье рассматриваются этапы развития страхового рынка Армении, рассматриваются крупные страховые компании в рынке, их роль на рынке и новые страховые продукты, предлагаемые компаниями. Представлены общие характеристики недавно разработанных и предлагаемых продуктов страхового покрытия. Предлагаются возможные пути выхода на внешние рынки ведущих рыночных компаний. В рамках этой статьи в качестве нового продукта предлагается введение нового страхового продукта, страхового покрытия «Майнинг ферм криптовалют».

HAYK POGHOSYAN

THE RA INSURANCE MARKET AND NEW PRODUCTS

Key words: insurance market, new products, insurance policies, large insurance companies, Minimed, Casco plus.

The article considers the stages of development of the Armenian insurance market, examines the major insurance companies in the market, their role in the market and new insurance products offered by companies. Here we present general characteristics of

recently developed and proposed products of insurance coverage. We suggest possible ways to enter the foreign markets for leading market companies. Within the framework of this article is proposed the introduction of a new insurance product, such as insurance coverage for the "Mining of the Crypto-Currency farm".

ՍՈՖՅԱ ՊՐՈՒՏՅԱՆ

Առդիկ, մագիստրատուրա 1-ին կուրս

ԵԿԱՄՏԱՅԻՆ ՀԱՐԿԻ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՀՀ ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ՈԼՈՐՏՆԵՐԻ ՎՐԱ

Հիմնաբառեր. եկամտային հարկ, դրույքաչափ, տեղեկատվական տեխնոլոգիաներ, արտարժույթ

Հոդվածում քննարկվում է եկամտային հարկի դրույքաչափի փոփոխությունը ՀՀ-ում: Ուսումնասիրվել և համեմատվել են Հայաստանի և Հնդկաստանի եկամտային հարկի դրույքաչափերը: Հոդվածի նպատակն է՝ պարզել եկամտային հարկի դրույքաչափի փոփոխության ազդեցությունը ՀՀ-ում օտարերկրյա կազմակերպությունների ներդրումների վրա:

Եկամտային հարկը ՀՀ հարկային օրենսգրքի 141-րդ հոդվածով հարկման օբյեկտի համար նախատեսված, սահմանված կարգով, չափով և ժամկետներում պետական բյուջե վճարվող պետական հարկ է:

Օրենսգրքի 140-րդ հոդվածի համաձայն՝ եկամտային հարկ վճարողներ են համարվում ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձինք: Անհատ ձեռնարկատերերը և նոտարները՝ որպես ֆիզիկական անձինք, եկամտային հարկ վճարողներ են համարվում միայն անձնական եկամուտների մասով:

2018 թ. հունվարի 1-ից Հայաստանի Հանրապետությունում գործում են եկամտային հարկի նոր դրույքաչափեր: Համեմատելով 2 տարիների դրույքաչափերը՝ կարող ենք ասել, որ՝

1. ամսական մինչև 279 հազ. դրամ եկամուտ ունեցող վարձու աշխատողների համար, որոնք կազմում են բոլոր վարձու աշխատողների շուրջ 90%-ը (շուրջ 553 հազ. վարձու աշխատող), եկամտային հարկի գծով հարկային բեռն իջնում է,

2. ամսական 279 հազ. դրամից բարձր եկամուտ ունեցող վարձու աշխատողների համար, որոնք կազմում են բոլոր վարձու աշխատողների ընդամենը 10%-ը (շուրջ 62 հազ. վարձու աշխատող), եկամտային հարկի գծով հարկային բեռն բարձրանում է: Հարկ է նկատել, որ մինչև 279 հազ. դրամ եկամուտ ստացողների համար ՀՀ հարկային օրենսգրքով ամրագրված դրույքաչափերով՝ վճարման ենթակա եկամտային հարկի գումարը նվազում է, իսկ մինչև 300 հազ. դրամ եկամուտ ստացողների համար այդ ավելացումը կազմում է ընդամենը 420 դրամ:

Միաժամանակ հարկ է նշել, որ եկամտային հարկի նոր դրույքաչափերի կիրառությունը ոչ միայն չի ավելացնելու ՀՀ պետական բյուջեի հարկային եկամուտները, այլև հանգեցնելու է տարեկան շուրջ 3.8 մլրդ դրամի չափով

¹ Տես <http://www.arlis.am/>: